Ռումինիայում ՀՀ դեսպան Սերգեյ Մինասյանի հարցազրույցը «Gazeta de Cluj» թերթին

Հարց. Ո՞րն է Հայաստանի և Ադրբեջանի միջև այս հակամարտության բռնկման պատճառը:

Սերգեյ Մինասյան. ԼՂ հակամարտությունը, որպես միջազգային տարածաշրջանային քաղաքականության խնդիր, ձևավորվել է դեռևս 20-րդ դարի սկզբին, երբ Ռուսական կայսրության անկումից հետո Հարավային Կովկասում ձևավորվեց 2 անկախ հանրապետություն՝ Հայաստանը և Ադրբեջանը, և մեծ մասամբ հայերով բնակեցված տարածաշրջանը, որը հայերեն կոչվում է Արցախ, դիտարկվում էր այդ ժամանակների ռազմաքաղաքական և դիվանագիտական գործընթացների շրջանակներում: Հավանաբար, ավելի ճակատագրական գործոն դարձավ 1921թ. հուլիսին՝ Հայաստանի և Ադրբեջանի խորհրդայնացումից հետո, Անդրկովկասյան բյուրոյի որոշումը, որի արդյունքում, Իոսիֆ Ստալինի ուղղակի ճնշման ներքո, այդ տարածաշրջանն ընդգրկվեց Խորհրդային Ադրբեջանի կազմում: Տասնամյակներ շարունակ Ադրբեջանի կոմունիստական ուժերը էթնիկ և տնտեսական խտրականության քաղաքականություն իրականացրեցին, որի նպատակն էր փոխել տարածաշրջանի վարչական սահմանները, ինչպես նաև իրականացնել Լեռնային Ղարաբաղի էթնոժողովրդագրական կազմը փոխելու քաղաքականություն: Այդ շրջանի հայերի փորձերը՝ հակազդել Խորհրդային Ադրբեջանի խտրական քաղաքականությանը, 1980-90-ականներին՝ Խորհրդային Միության գոյության վերջին տարիներին, հանգեցրեցին ոչ միայն Լեռնային Ղարաբաղում, այլև Սումգայիթ, Բաքու, Կիրովաբադ (Գյանջա) և այլ քաղաքներում բնակվող հայկական բնակչության զանգվածային ջարդերի և տեղահանումների: Հարյուր հազարավոր էթնիկ հայեր տեղահանվեցին Խորհրդային Ադրբեջանի տարածքից, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի մի շարք բնակավայրերից:

ԽՍՀՄ փլուզման գործընթացի ընթացքում, այդ պահին գործող ԽՍՀՄ սահմանադրական օրենսդրության հետ լիարժեք համապատասխանության սահմաններում, նախկին խորհրդային Ադրբեջանի տարածքում առաջացավ երկու պետական միավորում՝ ներկայիս Ադրբեջանի Հանրապետությունը և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը (Արցախի Հանրապետությունը): Ադրբեջանը չհաշտվեց այդ փաստի հետ, որի արդյունքում, նախորդ տարիների ջարդերի և տեղահանումների հետ, սկսեց լայնածավալ ագրեսիա Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դեմ, որն ավարտվեց նրա ռազմական պարտությամբ:

Արդյունքում 1994թ. մայիսին, միջազգային դիտորդների միջնորդությամբ, ստորագրվեց եռակողմ զինադադար Հայաստանի Հանրապետության և Արդբեջանի Հանրապետության պաշտպանության նախարարների և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության բանակի հրամանատարի կողմից: Հայաստանը համարվում է ԼՂ հայերի անվտանգության երաշխավորը և ներկայացնում է ԼՂՀ շահերը միջազգային հարթակներում և բանակցային գործընթացում, որը դեռ 1990-ական թվականներից վարվում է ԵԱՀԿ Մինսկի խմբի երեք համանախագահների միջնորդությամբ (Ռուսաստան, Ֆրանսիա և ԱՄՆ):

Հարց. Ինչու՞ Ադրբեջանը հարձակվեց Հայաստանի վրա սահմանի երկայնքով, որը երկու երկրների կողմից և միաձայն համարվում է միջազգայնորեն ճանաչված սահման:

Սերգեյ Մինասյան. Դեռևս 90-ական թվականներից Լեռնային Ղարաբաղի դեմ ծավալած ակտիվ ռազմական գործողություններին զուգահեռ Ադրբեջանը հրետակոծության է ենթարկել նաև Հայաստանի սահմանը: Հակահայկական հռետորաբանության ազդեցությամբ և Ադրբեջանի պետական մարմինների միջնորդությամբ Հայաստանի քաղաքացիների դեմ տեղի են ունեցել գործողություններ, ինչի ապացույցը 2004թ. ՆԱՏՕ-ի կուրսերի ժամանակ Հունգարիայի մայրաքաղաք Բուդապեշտում քնած հայ սպա Գուրգեն Մարգարյանի սպանությունն էր՝ Ռամիլ Սաֆարովի կողմից: Չնայած Սաֆարովը, Հունգարիայի դատարանի որոշման համաձայն, ցմահ ազատազրկման էր դատապարտվել, սակայն 2013թ., հունգարական իշխանությունների որոշմամբ, արտահանձնվել էր Ադրբեջանին, որտեղ միանգամից ազատ էր արձակվել և արժանացել պարգևների ու կոչումների: Նման գործողությունները, ինչպես օրինակ, Հայաստանի սահմանին սույն թվականի հուլիսին ռազմական ագրեսիայի առաջին փուլից հետո Ադրբեջանի կառավարության կողմից կազմակերպված տարբեր երկրներում ադրբեջանական սփյուռքի ներկայացուցիչների կողմից հայերի վրա հարձակումները (ԱՄՆ-ից մինչև Ռուսաստան, Բելգիայից մինչև Գերմանիա) ցույց են տալիս, որ Ադրբեջանի ագրեսիվ մտադրությունները չեն սահմանափակվում միայն Լեռնային Ղարաբաղի կամ, նույնիսկ, Հայաստանի Հանրապետության սահմաններով, այլև ուղղված են հայերի և նրանց ունեցվածքի դեմ՝ ամբողջ աշխարհով:

Հայաստանի սահմանների դեմ ներկայիս ագրեսիան, որն իր ոճով հիշեցնում է 2016թ. ապրիլին Լեռնային Ղարաբաղի դեմ Ադրբեջանի մեկ այլ ագրեսիան, ամենայն հավանականությամբ պայմանավորված է սոցիալ-տնտեսական դժվարություններով, որոնք սրվել են այդ երկրում նոր տիպի կորոնավիրուսի համավարակի պայմաններում: Իսկ Հայաստանի, և ոչ թե Լեռնային Ղարաբաղի սահմաններին հարվածելու որոշումը պայմանավորված է Ադրբեջանի ղեկավարության սխալ գնահատականներով, թե հայկական ուժերն այդ մասում ավելի վատ են պաշտպանված, քան Լեռնային Ղարաբաղում:

Հարց. Ի՞նչ դեր է խաղում Թուրքիան այս հակամարտության մեջ:

Սերգեյ Մինասյան. Թուրքիան, որը դեռ 90-ական թվականներից ուղղակի պաշտպանում է Ադրբեջանին, ցամաքային շրջափակման է ենթարկում Հայաստանը, ռազմատեխնիկական և բացահայտ դիվանագիտական աջակցություն է ցուցաբերում Ադրբեջանին, դրանով իսկ գրեթե դառնալով եթե ոչ հակամարտության անուղղակի մասնակից, ապա Ադրբեջանի ուղղակի գործընկեր: Սակայն նույնիսկ դա հաշվի առնելով՝ Թուրքիայի արձագանքը և ամենաբարձր մակարդակով քաղաքական հայտարարություններն աննախադեպ են ներկայիս փուլում, ինչը, ամենայն հավանականությամբ, պարզ տեղավորվում է այն ագրեսիվ դիրքորոշման տրամաբանության մեջ, որով Թուրքիան իրականացնում է իր քաղաքականությունը ոչ միայն Հարավային Կովկասում, այլև իր սահմանների գրեթե ամբողջ երկայնքով՝ սկսած Միջերկրական ծովից մինչև Մերձավոր Արևելք:

Հարց. Ի՞նչ կասեք Ռուսաստանի մասին:

Սերգեյ Մինասյան. Ռուսաստանը համարվում է Մինսկի խմբի համանախագահ երկրներից մեկը և անմիջականորեն ներգրավված է այդ միակ լեգիտիմ ձևաչափում, որն ուղղված է բանակցային գործընթացի առաջխաղացմանը: Դրա հետ մեկտեղ, ռազմաքաղաքական ոլորտում Ռուսաստանը համարվում է առաջատար դերակատար, և պատահական չէ, որ 1994թ. և 2016թ.հենց նրա ուղիղ ներգրավմամբ են ձեռք բերվել զինադադարի պայմանավորվածությունները: Ռուսաստանի ներկայացուցիչները կարևոր դեր են խաղացել նաև 2020թ. հուլիսին հայ-ադրբեջանական սահմանի լարվածության թուլացման հարցում: Ռուսաստանն այդ գործընթացում ունի ԵԱՀԿ Մինսկի խմբի մյուս երկու համանախագահների աջակցությունը (Ֆրանսիայի և ԱՄՆ-ի):

Հարց. Արդյո՞ք դուք գտնում եք, որ հայ-ադրբեջանական հակամարտությունը կարող է վերաճել տարածաշրջանային հակամարտության, որի մեջ կներգրավվեն նաև Թուրքիան և Ռուսաստանը:

Սերգեյ Մինասյան. Ռուսաստանի, Մինսկի խմբի մյուս համանախագահների ջանքերը, որոնց մեծապես աջակցում է նաև ԵՄ-ն, ոչ միայն հայ-ադրբեջանական սահմանին ու Լեռնային Ղարաբաղում լարվածության թուլացման, այլև ընդլայնված տարածաշրջանային հակամարտությունից խուսափելու հույսեր են ներշնչում: Սակայն, այդ տեսանկյունից, անհրաժեշտ է նաև միջազգային հանրության աջակցությունը՝ շփման ամբողջ գծով տեղակայելու համատարած մշտադիտարկման համակարգեր, ներդնելու դեպքերի հետաքննության մեխանիզմներ, տեղակայելու դիտորդներ և այլ համապատասխան մեխանիզմներ, որոնցից հրաժարվում են Ադրբեջանը և վերջինիս սատարող Թուրքիան:

Հարց. Ինչպե՞ս կմեկնաբանեք այն փաստը, որ Սուրբ Սոֆիայի տաճարը նորից վերածվել է մզկիթի:

Սերգեյ Մինասյան. Բնական է, որ թուրքական իշխանությունների որոշումը մզկիթի վերածելու Սուրբ Սոֆիայի տաճարը, որը հանդիսանում է կարևոր պատմական և մշակութային հուշարձան և ՅՈՒՆԵՍԿՕ-ի մշակութային ժառանգության օբյեկտ, չի կարող լուրջ մտահոգություն չառաջացնել: Այն լուրջ մտահոգություն է առաջացնում նաև շատ այլ երկրների մոտ, որոնք սերտ կապեր և արմատներ ունեն ուղղափառ բյուզանդական ժառանգության հետ և որոնք ընդունում են Սուրբ Սոֆիան առաջին հերթին որպես կրոնական և մշակութային փոխգործակցության, այլ ոչ թե որպես քաղաքական գործողությունների օբյեկտ: